

ԲՈՅՍԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

Ս. ԶԵԼԻՆՍԿԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԿՈՒԹԻՒՆ ^{*)}

Ինչպէս յայտնի է, շոգ երկրների ժողովուրդը բոլորից պատ-
րաստուած կերակուր և առհասարակ բուսեղէն չափ է գործածում,
քան թէ ցուրտ երկրների բնակիչները: Այս նկատուած է և Անդըր-
կովկասի շոգ մասերում: Սակայն մի ազգութեան և մինչև անգամ
մի ցեղի պատկանող, բայց զանազան կլիմայում ապրող ժողովրդի
մէջ բոլորի գործածութիւնը արտաւայտուած է զանազան աստի-
ճանով. լեռնականները ոչ մի պարտիզի բոլոր չեն գործածում իբրև
կերակուր, եթէ չհաշուենք սոխը և սխտորը, նոյնպէս և զետնա-
խնձորը (картофель), որի գործածութիւնը Անդրկովկասի տեղա-
կան բնակիչների մէջ չափ սակաւ է տարածուած: Լեռնաբնակների
մէջ չնչին գործածութիւն ունին և վարենի բոլորը և պտուղները:
Ընդհակառակը՝ շոգ տեղերի բնակիչների կերակրի մեծ մասը բու-
սեղէն է: Նրանք բացի պտուղներից, որոնց ամեն տեսակը աչ-
գիներում կարելի է գտնել, և ընտանի (մշակելի) բոլորից՝
մեծ քանակութեամբ գործ են ածում և վարենի բոլոր: Յայտնի է
նոյնպէս, որ քրիստոնեայ ազգերը բուսեղէն աւելի են գործածում
քան թէ ոչ քրիստոնեաները, որովհետև քրիստոնեաները պատ են
պահում և պատ օրերում չեն կարող մսեղէն կամ կաթնեղէն ուտել:
Հարկաւոր է նկատել նոյնպէս և այն հանգամանքը, որ շոգ երկրի

*) Ներկայ յօդուածի առաջին մասը պ. Զելինսկին կարդաց այս աշ-
նանը Թիֆլիսում կայացած «Առաջին Սովկասի աչգիների բերքերով զբա-
ղուողների ժողովում» և վարձատրուեց բրոնզէ մեդալով:

Ծան. խմբ.

բնակիչները բաւականին մեծ քանակութեամբ գործ են ածում գըր-
գոող և չուղիչ բոյսեր, ինչպէս են՝ սոխ, սխտոր, կարմիր պղպեղ,
դառն և կծու կանաչեղէն և այլն:

Անդրկովկասի աղգերից հայերը բուսեղէնի գործածութեան
մէջ առաջին տեղն են բռնում, մանաւանդ շոգ տեղերում բնակող
հայերը, որոնց կերակրի մեծ մասը բուսեղէն է: Այս հանգամանքը
այնքան նկատելի է, որ չիշուում է պարսկերէն մի առածի մէջ, որ
ասում է՝

قدر زر زر کر شناسد
قدر کوهر کوهری
قدر کل بلبل شناسد
قدر پنجر ارمنی

«Ոսկու արժէքը ոսկերիչն է իմանում, գոհարի արժէքը՝ ակնա-
վաճառն, վարդի արժէքը սոխակն է իմանում, կանաչեղէնի ար-
ժէքը՝ հայը»:

Կերակրի տեսակները և նրանց բաղադրութիւնը, ինչպէս չափո-
նի է, մեծ նշանակութիւն և ազդեցութիւն ունին անհատի և ազգի
բնաւորութեան վրայ, ուրեմն մի որեւիցէ ազգի մէջ գործածած կե-
րակրների նկարագրութիւնը չի կարող որոշ նշանակութիւն չունե-
նալ գիտնական տեսակէտից: Ի նկատի ունենալով այս հանգա-
մանքը, մենք այս մեր աշխատութեան մէջ օգտաւէտ ենք համա-
րում նկարագրել թէ վայրենի և թէ ընտանի բոյսերը, որոնք
հայերը գործ են ածում իբրև կերակուր կամ կերակրի համեմ, ըստ
կարելոյն նկարագրելով և կերակրների պատրաստելու եղանակը ¹⁾:
Բայց ի նկատի ունենալով, որ հայերը ապրում են զանազան կլի-
մաներում և զանազան պայմաններում և նրանց վրայ անշուշտ ունե-
ցել են ազդեցութիւն կերակրի վերաբերեալ թէ կլիման, թէ ուրիշ
ֆիզիքական պայմանները և թէ նրանց շրջապատող աղգերը, ուրեմն
և դրանցից առաջացած զանազանութիւնը, ուտելեղէնի մէջ, մենք
յարմար ենք համարում ճշտութեան համար չիշել այն բոյսերը և
կերակրները, որոնք գործածական են Արեւանի նահանգում, այն էլ
գլխաւորապէս շոգ տեղերում ապրող հայերի մէջ:

Արեւանի նահանգի հայերի մէջ գործածելի բոյսերը բաժանուում
են երկու մասի կամ երկու խմբի. առաջինին պատկանում են վայրենի

¹⁾ Մենք մի ուրիշ ժամանակ կը նկարագրենք հայերի գործ ածած բո-
լոր տեսակ կերակրները, բայց այստեղ կը բաւականանանք նկարագրել այն
կերակրները, որ պատրաստում են միմիայն բոյսերից կամ որոնց գլխաւոր-
մասը բուսեղէն է և նրանք բոյսերի անունով են կոչուում:

բույսերը, իսկ երկրորդին—Ընտանի կամ մշակելի բույսերը: Վայրենի բույսերը ժողովում են դաշտերում զանազան ժամանակ, նախած թէ բույսերի որ մասերը պատրաստ են գործածութեան համար՝ գարնանը բույսերի տերևները, ամառուայ մօտ և ամառը նրանց ցողունները, իսկ աշնանը՝ պտուղները: Ընտանի բույսերը մշակում են բանջարանոցներում և պարտէզներում: Կը բերենք այս աշխատութեան մէջ երկու խմբին էլ պատկանող բույսերի ցուցակը այբուբենական կարգով, նշանակելով նրանց թէ հալկական և թէ գիտնական (լատինական), իսկ տեղ-տեղ և ռուսերէն անունները:

Վ Ե Յ Ր Ե Ն Ի Բ Ո Յ Ս Ե Ր Ի Գ Ո Ր Ծ Ա Ծ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ը

Վայրենի գործածելի բույսերը հետևեալներն են.

- 1) Անիսոն—*Pimpinella Anisum* L., анисъ.
- 2) Ասորեկ, զազի խոտ—*Eruca Sativa* L.
- 3) Աւելուկ—*Rumex* L. բուսի մի տեսակը:
- 4) Բոխ, բոխի, բողիկ, ժախ—*Heracleum villosum* Fich.
- 5) Գալլուկ, զողլապատ—*Humulus Lupulus* L., хмель.
- 6) Գինձ վայրի—*Coriandrum*-ի մի տեսակը, дикий кишнецъ.
- 7) Գեանդիլայ—*Teucrium* L. (այս ցեղի մի տեսակն է):
- 8) Դաղձ—*Mentha sylvestris* L., мята дикая.
- 9) Երիցանուկ, երիցու աղցան—*Peucedanum* Koch.
- 10) Երնջակ, էրնջանուկ—*Eryngium campestre* L.
- 11) Թելուկ—*Atriplex hortensis* L., лебеда.
- 12) Թրթնջուկ—*Oxalis Acetosella* L., дикий щавель.
- 13) Խաւարածիլ, իշխուն, իշղուն—*Rhabarbarum, Rheum* L.
- 14) Ծնեքեկ—*Asparagus officinalis* L., спаржа.
- 15) Ծտի պաշար, ճնճղան պաշար—*Capsella Bursa pastoris*

Mench, пастушья сумка.

16) Կապար (անուանում են և թուրքի բառով քաւառ)—*Caparis herbacea* Wild., каперсы.

17) Ղանդիլ—*Allium ursinum* L., черемша.

18) Մառուր—*Rosa canina* L., шиповникъ.

19) Նուրկ—*Arum Dracunculus* L.

20) Շրէշ, շրեշտ—*Asphodelus ramosus* L.

21) Ուրց—*Thymus Serpyllum* L., богородичная трава.